Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔԸ" ՆԵՐԿԱՅ 1893 ԹՈՒԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆՈՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներկայ 1893 թուին «ԱՐՁԱԳԱՆՔԸ» հրատարակվում է այժմեան գիրքով և նոյն ծրագրով։ Թերթը ստանում է «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրները։

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»՝ տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան հրապարակի և Միջի-Փողոցի անկիւն, քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
հինգշաբթի, 27 մայիսի
Տ. ՍԱԹԻՆԻԿ ՉՄՇԿԵԱՆԸ մասնակցութեամբ հայ դերասանական խմբի կրտայ
I
ՀԱՐՄԱԿ ԵՒ ԱՇԽԷՆ
պատմ. դրամ., 4 արար. հեղ. Հ.աքիմեանի
II
ՏԱՆ ՏԵՂԱԿ ՀԱՐՍՆԱՑՈՒ
Փարս 1 արար. հեղ. Գ. Չմշկեանի։
Տեղերի գինը սովորականն է։
ՍԿԻԶԲՆ Է 8½ ԺԱՄԻՆ
(82) (2—1)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ պատիւ ունի յայտնել ամենքին, որ այս մայիսի 19-ից ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ մէջ ընդունվում են նուիրատուութիւններ յօգուտ Թիֆլիզի քաղաքի չքաւոր բնակիչների, որոնք վնասուել են Կուր գետի յորդանալուց։
(2) (3—2)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ներ. դպրոցի հոգաբարձուաց բողոքը սինօդին։ Նահանգական ատեանի որոշումը 8 իրաւասուների և 16 թեկնածուների ընտրութեան մասին։ Նամակ խմբագրութեան։ Ախալցխայից։ Զինուորական նախարար. զինուորական խորհ. կարգադրութիւնը «Կադետսկի կորպուս» դպրոցների վերաբերեալ։ Կարնոյ ռուսաց հիւպատոսի տեղս ժամանումը։ Մանկապարտէզի կազմակերպութիւնը։ Ռուսաց «մեռելոցի» տօնի չյետաձգուելը։ Ինժեներների ինստիտուտի աշակերտների աշխատանքները։ «Բաթումսի Լիստոկի» փակառումը։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Լուրեր Կ. Պոլսի լրագրներից։

ԳԻՏՈՒԹԻՒՆ և ԱՐՈՒԵՍՏ.—Մի նոր հայ նկարիչ։

ՖԵԼԻԵՏՕՆ.—Սնանկացած գործը։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Նամակ խմբագրութեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը իւր չորեքշաբթի օրուայ նիստում, որին ներկայ էին բոլոր հոգաբարձուները միաձայն որոշմամբ գեր. Երեմիա եպիսկոպոսի անունով մի հեռագիր ուղղեց, որով խնդրում էր չետաձգել այսօրուայ ընտրութիւնները։ Յաջորդ օրը նորին սրբազնութիւնից մի լակոնական պատասխան ստացուեցաւ թէ՝ ընտրութիւնները նշանակուած են, չետաձգել չէ կարելի։

Այս պատասխանն ստանալուց յետոյ հոգաբարձութիւնը մի ուրիշ հեռագիր ուղղեց սինօդի անունով, որի մէջ մատնանիշ անելով Ներսիսեան դպրոցի հայրապետահաստատ կանոնադրութիւնը՝ յայտնում է թէ այսօրուան ընտրութիւններն այդ կանոնադրութեան հակառակ են և նոյնպէս խնդրում է չետաձգել մինչև ամենայն հայոց հայրապետի 'ի գահ ամբառնալը։

Նոյն օրը հեռագրով բողոքել են այս նոր ընտրութիւնների դէմ 1891 թ. ընտրուած եկեղեցական պատգամաւորները, պնդելով թէ հոգաբարձուներ ընտրելու իրաւունքն իրանցն է, քանի որ դեռ ևս իրանց ընտրողներից ընդունած յանձնարարութիւնը դեռ չեն կատարել միմիայն սինօդի կարգադրութեան համաձայն, որ նոյն 1891 թ. 'ի Տէր հանգուցեալ Մակար կաթուղիկոսի մահից յետոյ անմիջապէս որոշեց յետաձգել հոգաբարձուաց ընտրութիւնը մինչև նոր հայրապետի 'ի գահ ամբառնալը։

* * *

Քաղաքային գործերին վերաբերեալ նահանգական ատեանը իւր մայիսի 21-ի նիստում որոշել է քաղաքային տնօրինութեան թողնել 8 իրաւասուների և 16 թեկնածուների ընտրութեան օրը նշանակելու։ Ընդ սմին որոշուած է, որ այս երկրորդ ընտրողական ժողովում կարող են քուէարկուել այն 364 անձինք, որոնք իբրև իրաւասու էին առաջարկուած, նոյնպէս և այն բոլոր ընտրողները, որոնք ինքեանք կը ցանկային քուէարկութեան ենթարկուել։ Մեզ հաղորդում են որ այդ երկրորդ ընտրողական ժողովը տեղի է ունենալու Արքունական թատրոնի դահլիճում կիւրակէ, մայիսի 30-ին։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր։

Ախալցխայի Կարապետեան և Եղիսաբէթեան ուսումնարանի հոգաբարձութիւնը խնդրում է խմբագրութիւնից թոյլ տալ պատուական «Արձագանքի» միջոցաւ հրապարակաւ յայտնել շնորհակալութիւն հանգուցեալ Գասպար աղայ Մելքոնեանի մեծարգոյ ժառանգներին, որք յանձնեցին հոգաբարձութեանս յանուն Կարապետեան և Եղիսաբէթեան դպրոցներին իրանց հօր կտակած երկու հարիւր ռուբլին, և մեծարգոյ պ. Գաբրիէլ Այվազեանին, որ ի յիշատակ իւր վաղամեռիկ Խաչատուր որդու՝ նուիրեց նոյն դպրոցների համար քսան և հինգ ռուբլի։

Նախագահ հոգաբարձութեան՝

Կարապետ քահ. Տէր-Գրիգորեանց

Գործավար՝ Վահան Նազարեան։

8 մայիսի 1893 ամի,

Ախալցխա։

* * *

ԱԽԱԼՑԽԱ. «Թերթիդ № 55 Ախալցխայից մեր տուած լուրի մէջ հանգուցեալ Գասպար-աղա Մելքոնեանի կտակած 900 ռուբլու գումարից, 200 ռ. որ կտակուած է եղել Ս. Էջմիածնայ տաճարի վերանորոգութեանը դուրս չէր բերուած, երևի սխալմամբ բաց էր թողած. խնդրում եմ այժմ հրատարակել ի գիտութիւն ընթերցող հայ հասարակութեան։—Քաղաքիս անմաքրութեան առաջն առնելու համար ոստիկանութիւնը մշակներ է վարձել, որոնք պարտաւոր են աղտեղութիւնները մաքրելու և փողոցները աւելելու։ Աղտեղութիւնները քաղաքից դուրս տանելու համար վարձուած են մի քանի աղբատար կառքեր։ Դրա համար պահանջուող ծախսը հոգացվում է խանութևորներից և տնատէրերից։ Իւրաքանչիւր խանութևոր և տնատէր իւր կարողութեան համաձայն՝ որոշ ամսական վարձ է վճարում դրա համար։ Ի՞նչ ասել կ'ուզի որ դա մի գեղեցիկ կարգադրութիւն է, եթէ ի հարկէ, մշակների վրայ անպակաս լինի ոստիկանութեան աչալուրջ հսկողութիւնը, այլապէս դա մի ձևական բան կը լինի։

—Ալի-Սուլթան աւազակապետի (որ անցեալ տարի իւր ընկերներով ահ ու դողի մէջ էր ձգել Ախալցխայի շրջակայքը) ընկերներից մինը, ինչպէս լսում ենք, տեղիս բանտում պատուհանի ապակին կոտրելով՝ ուզեցել է նրանով կըտրուել սպանուել, բայց այդ իրան չէ յաջողուել, նա միայն վիրաւորուած է։

* * *

Զինուորական «կադետսկի կորպուս» կոչուած դպրոցներում չէին ընդունվում թոշակատու գիշերօթիկներ, այլ միայն որդեգիրներ։ Այժմ զինուորական նախարարութեան զինուորական խորհուրդը կարգադրեց, որ «կադետսկի կորպուսները» ընդունեն թոշակաւոր որդեգիրներ այնքան թուով, որքան որ տեղերի և այն հաշուով, որ դասարանում 36 աշակերտից աւելի չլինի։ Այս կարգադրութիւնը կարող է հեշտացնել զինուորական կրթութիւն ստանալ այն երիտասարդներին, որոնց ծնողների դրութիւնն իրաւունք չէ տալիս ձրիավարժ ուսում առնելու, իսկ սեպհական ծախսով զրկուած էին «կորպուս» մտնելու իրաւունքից։ Մեր խօսքը վերաբերում է հայ բազմաթիւ զինուորականների և մելիքների զաւակներին, որոնք «կորպուսներ» ընդունուելու արտօնութիւն ունին։

* * *

Մայիսի 20-ին Թիֆլիզ է ժամանել Կարնոյ ռուսաց ընդհանուր հիւպատոս իսկ. պետ. խորհրդական Մաքսիմովը։

* * *

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

(«Հայրենիք»)

Մանկապարտէզներ հաստատելու դժուարութիւնը առաջ կուգայ միշտ յարմար շէնք չունենալէն։

Քանի որ այդ կարևոր հաստատութիւնները կըկազմակերպուին մասնաւոր անձերու կողմէ և կամ թաղականներէ, ու ոչ ընկերութիւններէ, այդ դժուարութիւնները միշտ պիտի տիրեն։

Մանկապարտէզները կրնան իրենքզիրենք պահել, մանաւանդ անոնք ուր կըյաճախեն ունևոր ծնողներու զաւակներ։ Այդ մանկապարտէզները ոչ միայն կըգոցեն իրենց նախնական ծախքերը, այլ և քիչ շատ բան մըն ալ կ'աւելցնեն։

Թաղային մանկապարտէզները աւելի սուղի կընստին, որովհետև հոն յաճախող երկսեռ տղաք մեծ մասամբ աղքատ ծնողներու զաւակներն են և չնչին ամսական կըվճարեն։ Նորէն թէև իրենց նախնական ծախքերը չեն կրնար եկամուտով ծածկել, սակայն կարող են իրենքզիրենք պահել։

Կանոնաւոր Մանկապարտէզը պէտք է ունենայ մեծ սրահ մը, որ իր ընդարձակութեամբ համապատասխանէ մանուկներու թուին, պէտք է ծառայէ մարմնամարզի և շարժողական խաղերու և ձմեռը՝ զբօսանքի համար։

Այս սրահին քովերը անհրաժեշտ են երկու դասարաններ, որոնք օդաւէտ և լուսաւոր ըլլալու են, ինչպէս որ պէտք է ըլլայ նաև սրահը։

Մեծ սրահի պատերը կրնան զարդարուիլ մանուկներու կամ կենդանիներու կեանքէն առնուած սիրուն և իմաստալից պատկերներով։

Կրօնագիտութեան և իրագիտութեան պատկերները երբեք պէտք չէ պատէն կախուին. մանկան մի առ մի ցոյց տրըւելու են, երբ պէտք ըլլայ անոնց վրայ խօսելու։

Դասարանները պէտք է կահաւորուին երկար սեղաններով և նստարաններով, որոնց բարձրութիւնը յարմարելու է մանուկներու հասակին և ըլլալու է այնքան ցած որ մանուկներուն ոտքերը տախտակամածին վրայ հանգչին և սեղանի բարձրութիւնը հասնի իրենց կուրծքին։

Գրասեղանները պէտք է դրուած ըլլան այնպէս, որ լոյսը ձախ կողմէն գայ և իրարմէ այնքան հեռու, որ Մանկական Պարտէզի վարժուհիին անցուդարձին արգելք չըլլան, երբ մանուկներու

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍՆԱՆԿԱՑԱԾ ԳՈՐՏԸ

ԶՐՈՅՑ

Շատ որ փքուես, շուտ կըտրաքուես։

Ժող. առած.

I

Մի անգամ, սաստիկ հեղեղատների ժամանակ, դժբաղդաբար թէ բարեբաղդաբար, գորտը անտառի մթին խորշերից յանկարծ ընկաւ մի լիճ, որ գտնվում էր մի ժայռապատ սարից քիչ հեռու և որի մօտից բղխում էր մի փոքրիկ աղբիւր։

Կանաչավառ խոտը խայտաբղէտ ծաղիկներով հանդերձ ծածկել էր լճի եզերքը և տուել նրան մի սքանչելի, մի գրաւիչ գեղեցկութիւն։

Բայց ո՞րտեղ չեն պատահում գորտերը. ո՞ր գեղեցկութիւնն ու մաքրութիւնն են խնայում և չեն ապականում։ Ահա և այդ լիճն էլ զերծ չմնաց ինքնակոչ գորտի ժանտահոտ կեղտոտութիւններից։

Աղբիւրի կարկաչիւնը նա որ լսեց, լճի մէջ մի արձակ արշաւանք գործեց և ամենուրեք դատարկ և անմարդաբնակ տեսնելով, իւր լպիրշ և զզուելի կոկորդով ձայնակցեց աղբիւրի խոխոջմանը և կազմեց մի այնպիսի անտանելի ներդաշնակութիւն, որ լսողի վրայ բացի անախորժութիւնից ու զզուանքից ոչինչ դուրեկան տպաւորութիւն չթողեց։

Գորտը մէկ էլ՝ ազատ, արձակ գրոհ տուաւ աջ ու ձախ ու երբ ոչինչ չգտաւ, ինքն իրան ասաց. «Ուրեմն այս բոլորը իմն է. ո՜րքան մեծ բաղդ, ո՜րքան մեծ փառք։ Սորանից առաջ անտառի մի խորշում ընկած մի քանի կաթիլ կեղտոտ ջրի մէջ հազիւ էի կարողանում օրս, կեանքս անցկացնել, իսկ այժմ այս ընդարձակ, ականակիտ լիճն իմն է և ոչ ոք չկայ այստեղ. կ'աշխատեմ ոչ ոքին էլ չթողնել։ Բայց այս փառքի մէջ մենմիայնակ ապրելն էլ մի երջանկութիւն չէ։ Ծանօթութիւն պէտք է սարքել, միայն այնպիսի մարդկանց հետ, որոնք պատուով և անունով մեծ դիրք ունին, որպէսզի նրանց հետ ապրելով ես էլ պատուի և փառքի հասնեմ։ Եւ կը հասնեմ անպատճառ, կը հասնե՜մ... և գորտը իւր կոկորդը սաստիկ բարձրացնելով, նետեց իրան ջրերի մէջ, աջ ու ձախ ճեմեց, մի երկու պտոյտ արաւ և վերադարձաւ մօտեցաւ ափին։

Բայց այս կչկչոցը, որ այսպէս շարունակ լսվում է, այս մի աղբիւր է, և ո՜րքան լաւ կը լինէր, որ ես աւելի մօտիկ տեսնէի նրան, կամ ո՜րքան մեծ բաղդ կը լինէր, եթէ նա գտնուէր այս իմ ընդարձակ լճի մէջ։ Այնուհետև ես կամաց-կամաց կըպճնեմ, կը զարդարեմ իմ դահլիճը, անունս կը հռչակուի, ամենքն էլ ինձ կըսկսեն պատուել, յարգել, օ՜, ինչ բա՜ղդ, ինչ բա՜ղդ և գորտը իւր ահռելի կոկորդով թնդացրեց սար ու ձոր։

Այդ միջոցին լճից քիչ հեռու ընկած՝ կանաչ մարմանդին արածում էր կովը. նա երկար բառաչեց։

—Այս ինչ է, ասաց գորտը ցնցուելով, ձայնը իսկոյն ընդհատեց և մտաւ ջրի տակ։

Կովի բառաչը կրկնուեց։

—Տէր Աստուա՜ծ, այս ինչ սոսկալի բան է, ասաց ինքն իրան և ջրի տակից գաղտուկ գլուխը հանեց, նայեց դէս ու դէն, որ և հեռուից կովին տեսաւ։

—Այս ինչ հրէշ է, գոչեց նա, ո՜րքան մեծ է, և ինչո՞ւ այնքան բարձր է ինձանից. մի՞թէ ես չեմ կարող այնքան բարձր լինել.... հմ՛մ... մի՞թէ չեմ կարող։ Եւ գորտը սկսեց փքուել. փքուեց, փքուեց և քիչ էր մնում, որ տրաքուի. այդ միջոցում կովը կրկին բառաչեց։ Նա սարսափահար նետուեց ջրի մէջ և քանի մի օր հիւանդ՝ մնաց այնտեղ։

Քանի մի օրից յետոյ նա կրկին երևան եկաւ։ Նրա բաղդը միանգամայն փայլում էր։ Մի օր սաստիկ հեղեղ պատահեց, այդ միջոցում նրա անձկալի աղբիւրը պատռեց իւր շաւիղը և ուղղակի թափուեց գորտի լճի մէջ։ Հեղեղից յետոյ գորտը այդ երբոր տեսաւ անչափ ուրախացաւ և սկսեց մտածել իւր շքեղ ապագայի համար։

Ո՜րքան օգտակար էր այդ աղբիւրի ջուրը գորտի համար։ Այդ թէև ուրիշին ոչ մի օգուտ չէր բերում, բայց գորտին ընդհակառակն։ Աղբիւրը թէ շատացնում էր նրա լճի ջուրը և թէ իրանով միջոց էր տալիս գորտին ճանապարհորդել այս և այն կողմերը, տեսակցել պէս-պէս երկըրների ու մարդկանց հետ և ճանապարհին պատահած ամեն մի տեսակ բարիք գողանալ, կողոպտել և բերել իւր լճի մէջ թափել։

Այսպէս էր անում գորտը։ Աղբիւրը նրա համար ամեն ինչ հեշտացրել էր։ Դորանով նա միանգամայն հարթացրեց իւր ճանապարհը։ Այդ միջոցով նա անշուշտ կը պսակէր իւր նպատակը։ Ինչպէս ագռաւները ուրախանում են մի գտած մեծ լէշով, նոյնպէս և անչափ ուրախ էր գորտը իւր անպատեհ ձեռք բերած աղբիւրով։ Բայց լճո՜վ,—դրա համար հօ աւելորդ է խօսել։

Մի օր նա աղբիւրի ընթացքով գընում էր և ամենուրեք իւր զզուելի կոկոռցով թինդ ու գրգռին բարձրացնում։ Այդ միջոցին ճանապարհին նրան պատահեց մի մեծ ձուկը։

Գորտը տեսնելուն պէս փոքր ինչ ցնցուեց։ Սակայն ձուկը քաղցր ժպիտով մօտեցաւ նրան, բարևեց և հարցրեց նրա առողջութիւնը։

Գորտը թէպէտ երկիւղից փոքր ինչ սարսափեց, բայց իւր քաջութիւնը ցոյց տալու համար բարձրացրեց իւր անճոռնի կոկորդը։

—Սո՜ւս, անշնորհք, գոչեց ձուկը. ո՞ւմն ես զարմացնում, սո՜ւս կաց և լսիր ինձ։

—Ի՞նչ կայ, ինչ լսեմ, խօսեց գորտը կոկորդը ընդհատելով։

—Գիտե՞ս ինչ կայ, ասաց ձուկը, ես կ'օգնեմ քեզ. քո աղբիւրը ես կը պայծառացնեմ, կը շքեղացնեմ, կը հարստացնեմ և դու այդ բոլորը կը վայելես, բայց այն պայմանով, որ ինձ ևս կէս բաժինը հասցնես։

—Ի՞նչ ես ասում, գոչեց գորտը, մի՞թէ դու կարող ես աղբիւրը այդպէս հարստացնել, մի՞թէ նրա մէջ կարելի է այդպէս մի բան անել։

—Ի հարկէ կարելի է. այդ չէիր կարող իմանալ, որովհետև դու ոչինչ չես հասկանում։

—Ուրեմն այդ ձևով ես անպատճառ կը հարստանամ։

—Ի հարկէ։

Գորտը ուրախութիւնից իւր կոկորդը բարձրացրեց։

—Սուս կաց, եղբայր, այդպէս հօ չի կարելի, մտմտաց ձուկը։

—Դէ լաւ, միայն ասա, ձուկ եղբայր, ես մեծ մարդ եմ։

—Այո, մեծ ես։

—Իսկ այս աղբիւրով ես կարո՞ղ եմ աւելի մեծ անուն ունենալ։

—'Ի հարկէ կարող ես. մարդիկ կըգան, իրանց երեսը այդ ջրերով կըլուանան, կեղտերը կըմաքրեն և դրա փոխարէն կ'օրհնեն քեզ ու կըգովեն։

—Թէկուզ այդ կեղտերն էլ երեսիս թափուի, միայն թէ ես հարստութիւն, հարստութիւն ունենամ։ Հարստութեամբ ես միշտ կարող եմ մեծ մարդկանց հետ նիստ ու կաց ունենալ. չէ՞, ձուկ եղբայր։

—Ի հարկէ, ամենամեծ մարդիկ ներկայումս գլուխ են խոնարհեցնում հարուստ համբակներին...

II

Գորտն ու ձուկը գնացին, մտան լիճը։ Նրանք առաջին օրուանից սկսած մի առժամանակ սիրով էին ապրում։

Ձուկը անդադար աշխատում էր նրա համար, և չիրաւի գորտն սկսեց կամաց-կամաց հարստանալ։ Աղբիւրն էլ քանի գնաց առատացաւ և դրանով մեր գորտի հարստութիւնը հետզհետէ մեծացաւ։

Որտեղ մի նշանաւոր ձուկ, որտեղ մի նշանաւոր կենդանի էր տեսնում, գնում էր նրա մօտ, կեղծաւորութիւններ անում, շփվում մէկին ու միւսին՝ և այդ միջոցներում ինքը իւր մէջ այնպէս փքւում, որ քիչ էր մնում տրաքուի։

Նա պատահմամբ ծանօթացաւ բադի հետ, որ նոյնպէս պատահմամբ ընկել էր նրա լճի մէջ։

Առաջին անգամ տեսնելուն պէս թէպէտ իւր սովորութեան համաձայն բարձրացրեց զզուելի կոկորդը, բայց ձկան սաստելով նա իսկոյն լռեց, ծանօթացաւ բադի հետ և անգամ մտերմական կապ հաստատեց նրա հետ։

Այդ օրուանից բադն էլ սկսեց իւր կարողութեան չափ օգնութիւններ հասցնել սնափառ գորտին։ Նա էլ իւր կողմից խոստացաւ բոլորին վարձատրել և

աշխատութիւնները աչքէ անցընել ուզէ։

Կարեւոր են երկու պահարաններ, մին հաստատութեան իրեղէնները և միւսը մանուկներու աշխատութիւնները պահելու համար։

Տղոց ճիշդ դիմացը պատէն կախուած ըլլալու է սև գրատախտակ մը, որու մէկ կողմը գրութեան, միւսը գծագրութեան համար կարմիր գծուած ըլլայ։

Սրահէ և դասարաններէ զատ շէնքին մէջ պէտք է գտնուին.

Ա. Նախասենեակ մը, ուր կախարաններու վրայ մանուկներու վերարուկուները և գլխարկները պիտի կախուին։ Նախասենեակին մէջ պէտք է գտնուին խորշադարաններ կրկնակօշիկներու համար, լուացարան մը ձեռքերը լուալու համար։ Ջուր խմելու համար ջրամաններ և գաւաթներ իւրաքանչիւր մանկան համար զատ զատ. քանի մը աթոռներ. հողեղէն աման մը կաւը պահելու համար։

Բ. Նախասենեակի մօտ, ոչ այնքան մօտ, որ օդը ապականուի, պիտի գտնուի յարմարութեան սենեակը։

Գ. Սենեակ մը տնտեսուհիին համար։

Դ. Տեղ մը ձմեռուան վառելափայտը պահելու։

Օդափոխութիւնը մանկապարտէզի գլխաւոր պայմանն է։ Նոյն սենեակին մէջ, ուր նստած կը պարապին մանուկները, շարժողական խաղերը պէտք չէ տեղի ունենան, որովհետև երգելու ատեն տղաք պիտի ներշնչեն այն օդը՝ զոր պահ մը առաջ արտաշնչած են։

Սենեակները պէտք է բաց կապոյտ ներկուած ըլլան, իսկ բոլոր պատուհանները բաղեղի շրջանակ ունենալու են։ Պատուհաններու երկու կողմը ամրացնելու է թաղարներ, որոնց մէջէն կանանչ բոյսը ինքն իրեն կը բարձրանայ։

Ամբողջ շէնք պէտք է պարտէզով շրջապատուած ըլլայ։ Իսկ պարտէզի մէջ խաղալու չոր, մանր աւազով ծածկուած մասնաւոր տեղ, ուր մանուկները ամառը կարենան իրենց զբօսանքը ընել։ Եթէ տեղը արևոտ է, վրանով մը ծածկելու է։

Շատ աղէկ կ'ըլլայ եթէ պարտէզը ծաղիկներ և պտղատու ծառեր ունենայ։

Պարտէզին մէջ մէկ մասը յատկացնելու է տղոց, և իւրաքանչիւրը իր անունն ունենալու է զանազան բանջարեղէններ և ծաղիկներ ցանելու և խնամելու համար, զանոնք մշակելով մանուկը բուսաբանութիւնը նկատողական ձևով կ'ուսանի։

Բաճ, բրիչ, թի, ցնցուղ ունենալու է շատ, մանուկներու համար։

Քանի մը նստարաններ պէտք է դնել պարտէզը, որոնք ձմեռը մեծ սրահը կը դրուին։

—

Մանկապարտէզը գործին հմուտ և ուսեալ տիկնոջ մը տեսչութեան ներքև պէտք է ըլլայ։

Եթէ տիկնանց ընկերութիւն մը հաստատած է Մանկապարտէզը, կրնայ նաև ուղղակի կերպով այդ մարմինը հսկել, բաւական է որ գործէն հասկցող ըլլայ։

Կառավարող Մանկապարտիզպանուհին պէտք է ըլլայ կին մը, որ իր ուսմունքը աւարտած է որ և է ուսումնարանի մէջ և անպատճառ պէտք է ունենայ Մանկապարտիզպանուհիի վկայագիրը։

30 հատ աշակերտի համար կը բաւէ մէկ վարժուհի. աւելի մանուկներու համար պէտք է օգնական մըն ալ, որ նախակրթարանի ուսմունքը աւարտած ըլլայ և նոյնպէս Մանկապարտիզպանուհիի վկայագիրը ունենայ։

Տնտեսուհի մը անհրաժեշտ է։

Լաւ կազմակերպուած Մանկապարտէզը պէտք է ունենայ՝

1 տետր հաշուակալութեան

1 օրագիր բացակայութեանց և ներկայութեանց։

1 տետր օրագրութեան՝ առօրեայ դասերը և պարապմունքները արձանագրելու համար։

1 տետր նկատողութեան, որ պիտի ծառայէ վարժուհիին կողմէ իւրաքանչիւր աշակերտի վիճակը, այսինքն վարքը, բարքը, բնաւորութիւնը, յառաջադիմութիւնը և այլն արձանագրելու։

1 տետր մանկապարտէզի գոյքերուն յատկացեալ։

Ծնողքներուն և տղոց ազգականներուն միշտ թոյլ տրուելու է այցելել Մանկապարտէզը ամեն ժամանակ։

Մանուկներու ընդունելութեան պայմանները կրնան տարբերիլ զանազան տեղեր, սակայն իբրև օրէնք աչքի առաջ ունենալու է որ 3 տարեկանէ վար և 7-էն վեր տղաք Մանկապարտէզ չեն ընդունուիր։

Տղաք ամեն օր պէտք է կանոնաւոր կերպով յաճախեն հաստատութիւնը, մաքուր և պարզ հագուած ըլլան։ Համազգեստը, կարմիր գոգնոցները (կուրծքին Մ. Պ. գրուած) գրեթէ ամեն տեղ ընդունուեցաւ։

Մանուկները, առանց բացառութեան, սահմանուած բարեկրթութեանը պէտք է հասնին և պարտաւոր են Մանկապարտէզի ամեն կարգապահութեանը ենթարկուիլ։

Գայիանէ Մ...։

* * *

Օրթոդոքս եկեղեցին «մեռելոցը» տօնում է Զատկից յետոյ եօթներորդ շաբթին և շաբաթ օրը։ Այս տարի «մեռելոցը» գալիս էր մայիսի 15-ին։ Որովհետև մայիսի 16-ն Թագաւոր-Կայսեր և Թագուհու կայսրուհու թագադրութեան տարեդարձը պիտի տօնուէր, ուստի սինոդոսը կարգադրեց որ «մեռելոցի» եկեղեցական արարողութիւնները կատարուին մայիսի 13 ին։

* * *

Նիկողայոս I կայսեր քաղաքական ինժեներների ինստիտուտում (Ս. Պետերբուրգում) ի ցոյց դրուած են ուսանողների տարեկան ճարտարապետական աշխատանքները։ Հինգերորդ (վերջին) կուրսի ուսանողների աշխատանքները վերաբերում են՝ կամուրջների և ջրանցքների շինութեան, բնակարանները տաքացնելու, օդը մաքրելու եղանակների և այլն։ Ամենալաւ նախագծերը, մայրաքաղաքի լրագրների ասելով, պատկանում են հինգ աւարտող ուսանողներին, որոնց մէջ առաջին տեղը բռնում է մեր հայրենակից պ. Քաջազնունին։

* * *

«Բաթումսկի Լիստոկ» լրագրի խմբագիր պ. Գուրսկին ներկայումս գտնվում է Թիֆլիզում և գնողներ է որոնում իւր թերթը ծախելու համար։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Կ. Պօլսի թերթերից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

—ՊԱՅԷԶԻՏ. Մայիս 6 թուականով կըհեռագրեն Ս***էն, որ Պայէզիտի քանի մը գիւղերուն մէջ երևան ելած մարախը ջնջելու համար կարինէն մասնաւոր պաշտօնեաներ հասեր են հոն, որք ժողովրդին հետ սկսեր են մարախի անհետացումին աշխատել։ Ահագին քանակութեամբ ճնճղուկ հասնելով, մեծապէս կընպաստեն այս գործին։

—ՎԱՆ. Ներքին գործոց նախարարութեան կըհեռագրեն որ Վան և Կաւաշ մայիս 5-ին երկրաշարժի սաստիկ ցնցումներ տեղի ունեցեր են, առանց որ և է վտանգ առաջ բերելու։

—ՉՄԸՇԿԱԾԱԳ. Մայիսի 3-ին քառասուն վայրկեանի չափ անընդհատ կարկուտ տեղաց կաղինի խոշորութեամբ. պտղատու ծառերը մեծապէս վտանգուած են։

—ԿԱՐԻՆ. Հողագործական տիպար ագարակի մը հաստատութեան պիտի ձեռնարկուի քիչ օրէն, այդ նպատակին համար յատկացած գետինը մասնագիտական քննութենէ մը անցնելէ ետք։

—ՎԱՆ. Կը տեղեկացնեն որ Վանի կուսակալութեան Պէյթ-էլ-Շէպապ գաւառակին մէջ գտնուած Սիւվարը-Խալըլ անուն լերան վրայ երեք հոգի ձիւնի հիւսի բռնուելով, մեռեր են։

—ԲԱՂԷՇԻ զանազան կողմերը արմտիքը սովն սկսած է արդէն, այս տարուան կարգէ դուրս ցուրտին պատճառով։ Կինճ գաւառի և Վարթօ գաւառակի բնակիչները սպառած են գարնան ցանքի համար պահած ցորեններն։ Տեղական իշխանութիւնը ջանք կ'ընէ սովին առջեւն առնելու համար և մօտակայ գաւառներէն արմտիք բերել կուտայ։

—Վեհ. սուլթանն իմանալով որ այս տարի Կարինի կուսակալութեան մէջ տիրած երաժշտութեան պատճառով տեղական ժողովուրդը կընեղուի ցորենի և ալիւրի նուազութենէն, իւր հայրագորով հօգածութեամբ հրամայեց Սամսոնի և Ամասիայի ալիւրի գործարաններէն 400,000 օխա ալիւր ղրկել Կարին, հրապարակին վրայ ծախուելու և դրամը հետզհետէ վճարուելու պայմանով. ինչպէս նաև 260,000 օխա ալիւր՝ Կարինի կայս. ջօրաբանակին համար։

Կայս. հրամանը Բ Դրան կողմէ հաղորդուած ըլլալով Կարինի կուսակալութեան, կարօտեալ ժողովուրդը բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանի արևշատութեան համար։ Այս լուրին հետևանքով Կարինի մէջ արմտիքի գինն սկսած է հետզհետէ կոտրիլ։

—ՎԱՆԷՆ և ԲԱՂԷՇԷՆ եկած նամակները կը տեղեկացնեն թէ այս տարի սաստիկ ձմրան պատճառաւ զանազան արկածներ պատահած են։ Վանի կուսակալութեան մէջ երեք ճամբորդ ձիւնի տակ մնալով մեռեր են։ Բաղէշի կուսակալութեան մէջ ոչխարահամար ընելու գնացող պաշտօնեաները ճամբան ձիւնի փոթորիկի բռնուեր են։ Ասոնցմէ մէկ քանին ահագին դժուարութիւններով կրցած են հասնիլ գեղ մը, ուր պէտք եղած հոգածութիւնը տրուած է իրենց. միւսները մեռեր են ձիւնին տակ. իրենց ետևէն ղրկուած ոստիկանզինուորներն ու գիւղացիները անոնց դիակները գտեր են։ Ոչխարահամարի պաշտօնեաններու ուրիշ մէկ խմբին ընկերացող ջօլճիները նմանապէս ցուրտին չդիմանալով մեռեր են։ Բաղէշի կուսակալութեան ուրիշ զանազան կողմերն ալ նմանօրինակ արկածներ պատահած են։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՄԻ ՆՈՐ ՀԱՅ ՆԿԱՐԻՉ

—

Այս տարի Փարիզի Champs de Mars պատկերահանդէսում ի տես դրուած են հայ նկարիչ պ. Զաքարեա Զաքարեանի երեք պատկերները, որոնք ներկայացնում են երեք գեղեցիկ nature morte-ի (անկենդան բնութիւն) տեսարան։ Պ. Զաքարեանի մասնագիտութիւնը հէնց nature morte է, այսինքն նկարել բնութեան անկենդան առարկաները։ Նորա գլուխ գործոց նկարներից մէկը արդէն արժանացել է Լիւքսանբուրգի թանգարանում դրուելու պատուին, որ, ինչպէս յայտնի է, քչերին է վիճակվում։ Այս տարուայ նկարահանդէսին հանած այդ երեք պատկերները առիթ են տուել Փարիզի մի մեծ օրաթերթին հետևեալ կարծիքը յայտնելու մեր հայրենակցի նկարչական ձիրքի մասին.

«Պ. Զաքարեանը իրօք մի սքանչելի նկարիչ է nature morte-ի։ Գերազանց ճարտարութեամբ նա ներկայացնում է բիւրեղի լուսանիւթ թափանցկութիւնը, կտրուած պըտուղների հեշտահամ լեցունութիւնը, մրգի ախորժաբեր գծագրութիւնը. և այդ ամենը նա նկարում է ոչ թէ շատերի նման գոյների թանձր և վառ կոյտերով, այլ նուրբ և փափուկ վրձինով զգվում է նորանց պատկերը։ Ուստի «մեռեալ բնութիւնը» մի կենդանի տպաւորութիւն է թողնում նայողի վրայ, կարծես թէ այդ ամենը թրթռում է մթնոլորտի մէջ, ուր սպասում ես լսել նկարած առարկաների անըմբռնելի շշուկը, որի շնորհիւ է, որ բացարձակ լռութիւնը միայն խուլերի համար գոյութիւն ունի։ Սպանիայի [illegible] երեք հրաշալիքներ են»։

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Խոնարհաբար խնդրում եմ ձեր պատուական թերթի մի անկիւնում զետեղեցէք իմ այս երկտող բացատրութիւնը։

Պ. Ս. Թառահեանը քննելով «Վերածնութեան դար» անունով իմ աշխատասիրութիւնը՝ («Տարազ» № 20) ինձ անուանում է հեղինակ, մինչդեռ ես այդ գրքի հեղինակը չեմ, այլ համառօտելով փոխադրողը Գուրևիչի և Պաւլենկովի գրքերից։ Այս առաջին։

Երկրորդ՝ նա գրում է իբր ես ջատագովել եմ Իգնատիոս Լոյոլային և երկինք բարձրացրել իբր բարոյականութեան քարոզիչ։

Ոչինչ այդպիսի բան չկայ այդ յօդուածում. ամբողջ գլուխը բառացի փոխադրուած է Պաւլենկովի գրքոյկից և այնտեղ պարզ գրած է օրդէնի բուն նպատակը (երես 183)։

Այդ յօդուածում օրդէնը չէ նկարագրուած, այլ դա նրա հիմնադրի կենսագրութիւնն է և զետեղուել է այդ գըրքում, վասնզի նա էլ «Վերածնութեան դարի» ծնունդ է և ներկայանում է սոսկ պատմական նիւթ, փաստ ու հնար եղածին չափ յարմարեցրած է, որ ընթերցողի ուշադրութիւնը գրաւէ այդ անձնաւորութեան եռանդը, տոկունութիւնը, հաստատակամութիւնը, որ չիրաւի զարմանալի է և ուրիշ ոչինչ։

Իսկ նրան կամ նրա հիմնած օրդէնը բարոյականութեան խնդրի հետ չէ կապած ոչ Պաւլենկովի գրքոյկի հեղինակը և ոչ հայերէնի փոխադրողը, որ իրանից բան չէ աւելացրել։

Ն. Տէր-Ա...։

22 մայիսի, 1893 թ.
Թիֆլիզ։

* * *

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԼՕՆԴՕՆ ԱՇՏԱՐԱԿԸ»

—

Ամեն մարդ լսած լինելու է էյֆելի աշտարակի մասին. Փրանսիացի լինել և այդ աշտարակով չպարծիլ, այդ չեղած բան է։ Սակայն ինչ կ'ասէք եթէ Լոնդոնցին գէթ նոյն պարծանքով վերաբերի «Լոնդոն Աշտարակ»-ին։ Գիտէք ինչու,—որովհետև Լոնդոն աշտարակը հսկայ լինելէ աւելի հին, շատ հին մի հաստատութիւն է։ Նա Լոնդոնի նորութեանց քով այն է, ինչ որ դատաւոր ծերունին իւր թոռանց թոռների քով։

Լոնդոնցիներէն որին կ'ուզէք հարցրէք տեղւոյն ամենաընտիր հրապարակների, կամ հաստատութեանց մասին, տարակոյս չկայ թէ նոքա անունների մի երկար շարք պիտի թափեն, բայց հաստատ գիտցէք թէ այդ անուանց շարքի մէջ անպատճառ առաջնութիւն պիտի ունենան «Լօնդօն Աշտարակը», Բրիտանական Միւզէումը», «Քիւբէչխա պալատը», «Կենդանաբանական պարտէզը», և այլ մասնաւորներ։ Ցանկին պիտի չհետևեմ, «Արձագանքի» ընթերցողները ձանձրացնելու նպատակ չունիմ. կըյուսամ թէ շահեկանութիւն պիտի ունենայ, եթէ փորձեմ մասնաւոր գաղափար տալ վերոյիշեալ հաստատութեանց միայն ոմանց մասին։ «Լօնդօն Աշտարակը» կըլինի առաջինն։

Լօնդօն Աշտարակը մայրաքաղաքիս արևելեան մասի մէջ՝ Թայմզ գետի հիւսիսային եզերաց վրայ կըբարձրանայ հինուց։ Ամբողջովին ընկղմուած է ծառերի մէջ. մի խոր խրամատով բաժանուած է քաղաքի մասէն. իւր չէզոք բայց հրամայող գիրքով աւատապետական դղեակների կատարեալ ներկայացուցիչ կարող է համարուել։

«Աշտարակ» (tower) անունը չէ կարող կատարելապէս բացատրել հաստատութեան նշանակութիւնը. սա ոչ թէ մի աշտարակ է, այլ աշտարակների մի պատկառելի հաւաքածոյ, մի շարք վեհապետների աթոռանիստ, մի ամրոց, ինքն իւր մէջ կենդրոնացած մի քաղաք։

Պատմութիւնը միայն մի քանի կասկածոտ կարծիքներ կըյայտնէ այս գըեթ ընտրութեան մասին։ Երբեմն

ըստ կարելոյն ապահովացնել բոլորի գրութիւնը։ Յաճախ առատ սեղան էր բաց անում նրանց առաջ, երբեմն էլ պէսպէս շաղփաղփանքներով սրտերը շահում, երբեմն էլ մի մի ընծայ, մի մի նուէր տալիս, բայց այդ բոլորը այնքան չնչին, այնքան աննշան, որ այդպիսիներն ամենավերջին ծառայողներն էլ կըվայելէին իրանց ոչ հարուստ տէրերից։

Կարճ ժամանակում, իւր ափեղցփեղ վարմունքով, իւր պէսպէս «ափերիստական» գործերով գործն ընդհանուրի խօսակցութեան առարկայ եղաւ։ Անմիտ Հերոստրադի նման նա էլ այդ էր ուզում։ Ինչ էլ, որ ուզում են ասեն, միայն թէ մի հռչակաւոր անուն ունենայ և միշտ անպակաս լինի հարստութիւնից։

Հռչակը ամեն ոք կարող է վայելել։ Հռչակները լինում են լաւ և վատ։ Մեր գործի համար միևնոյն է. նրա ցանկութիւնն այն է, որ ամենուրեք չիշեն իրան, իմանան, որ ինքը գոյութիւն ունի աշխարհի երեսին։

Ահա և կարկաչիւն աղբիւրը նա շահագիտական ճանապարհով շինել էր մի տեսակ հարստութեան դուռը, որ և անխնայաբար կեղեքում էր, խաբում, ստում էր և ամեն տեսակ լպիրշ վարմունքով առատօրէն վայելում նրա ջրերը և աջ ու ձախ ճեմում ընդարձակ լճի մէջ։

Եւ իսկապէս նրա հռչակը ըստ Հերոստրադի առաջ գնաց։

Օրիորդ գործերը, տիկին ձկները, պարոն բադերը, չարաճճի մողէսները միաբերան ծիծաղում էին նորա վրայ և նրա մասին կազմում հազար ու մի տեսակ անեկդոտներ։

Ահա թէ հռչակ կամեցող Հերոստրադ գորտը նշաւակութեան որպիսի առարկաներ և առիթներ էր թողել։

Պատմում են, որ նա մի անգամ սիրահարվում է մի գորտի աղջկայ վրայ և առաջարկում է նրան պսակուել իւր տհե։

Խորամանկ աղջիկը ծանակի համար առերես համաձայնվում է և յայտնում է նրան, որ պատրաստութիւն տեսնէ հարսանիքի համար։ Գորտը շատ ուրախանում է և սկսում է իւր բոլոր պատրաստութիւնները տեսնել։ Նա չէ զլանում, վաղօրոք կազմում է մի քանի տասնեակ հազար ռուբլու մուրհակ և պահում իւր մօտ մինչև հարսանիքի օրը։

Տենչալի օրը հասնում է։ Գորտը նախ և առաջ գնում է իւր սիրահարուած աղջկայ մօտ և նրան ցոյց է տալիս մուրհակն ու ասում. «պէտք է հայրդ ստորագրէ այս մուրհակին, որ այնուհետև մենք պսակուենք, առանց փող ես չեմ կարող պսակուել»։

—Ի՞նչ փող, գոչում է աղջիկը։

—Օժի՜տ, օժի՜տ, կոկռում է բարձր ձայնով գորտը։ Գիտես, ես ուզում եմ, որ մենք սիրուն տարազով լինինք, ուզում եմ, որ քո հագուստները շքեղ ու փարթամ լինի, և վերջապէս ուզում եմ մեզանից բոլորն էլ օրինակ վերցնեն, բոլորն էլ «տարազ» ունենան։ Եւ ինքը՝ գորտը իսկոյն գնաց լճի մի անկիւնն անցաւ և վերադարձաւ իսկապէս նոր տարազով կարած «դէբիւյում», երկար ու երկար պոչը ետևից քարշ տալով, կուրծքը խոպառ բաց. գլխին պէսպէս կանաչեղէններ։ Աղջիկը տեսնելուն պէս ծիծաղից թուլացաւ, թողեց նրան և իսկոյն հեռացաւ։

—Ցիմար, ցանցառ, ասաց նա իւր մտքումը և աւելացրեց՝ շուտով դրան կըմերկացնեն։

III

Գորտի լճից քիչ հեռու ընկած սարի վրայ ապրում էր Բազէն։

Նրա բարի հռչակը գորտը շատ էր լսել և արդէն նրա հետ ծանօթացել էր, սակայն մտերմութեան կապ տակաւին չունէր։

Շատ էր գորտը գնում սարի ստորոտները քսվում, կռռում, կոկռում, բայց Բազէն բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում։ Սակայն խորամանկ և խաբեբայ մարդկանց ճիրանները ամենախմաստուն մարդն էլ ընկնում է։

Բազէի բարեկամութիւնը՝ դիմակաւորուած մի շիրուանիի աղուէս իւր լկտի խորամանկութեամբ և ծայրահեղ կեղծաւորութեամբ կարողացաւ վայելել և մինչև անգամ ապաստան գտնել նրա ապարանքի պատուանդանում։

Փորը մէջքին կպած, քաղցած, ծարաւ, մերկ, առանց փարտիկի աղուէսը, շնորհիւ Բազէի խնամակալութեան, շնորհիւ նրա պարգևած բիւրաւոր շնորհների, մեծամեծ լաւութիւնների, ոչ միայն կարողացաւ իւր լպիրշ և լկտի կեղտերը ծածկել, ոչ միայն ապատուեց նաւթային, շարաւոտ պէսպէս աղջամղջերով լի փոսերից, այլև ընկաւ օրինաւոր մարդկանց շարքը, այլև սկսեց վայելել փոքր ինչ պատիւ և սէր։

Գորտը շատ էր նախանձում այդ բոլորով, շատ էր ուզում ինքն էլ Բազէի մտերմութիւնը վայելել, բայց դժբաղդաբար չէր կարողանում։

Վեհապանծ Բազէն նրան բոլորովին մի չնչին առարկայի տեղ էլ չդրեց, ուստի և արժան չարեց նրան անգամ ուշադրութեան առնել։

Օրըստօրէ նենգամիտ գորտի նախանձը պղտորեց, սաստիկ զայրացաւ Բազէի վրայ, սկսեց յաւակնաբար ամենուրեք նրան լկտի ու փծուն խօսքեր շանթել. սկսեց նրա շուքն ու փառքը կեղտոտ լուտանքներով գրուատել և իրան պատուաւոր առնելու համար մի մեծ լէշ ձգեց աղուէսի առաջ, որպէսզի նա հեռանայ Բազէից և անցնէ իւր կողմը։

Եթէ մէկի մէջ փոքրոգութիւնն ու լրբութիւնն արմատացած է, նրան այլևս դժուար է շտկել։

Եղկելի աղուէսը, որ Բազէի ապարանքում գտնուած ժամանակ այս և միւսին «նամուս» էր քարոզում, այս անգամ իւր նամուսը բաղնիքի մանկլաւիկների նման կոխեց ոտքանոցը և դարձաւ գորտի լճի ընդհանուր «քիսաչին»։

Մեծահոգի Բազէն երբ որ այս լսեց, բոլորովին չզարմացաւ, որովհետև լաւ գիտէր, որ «սէրը սովոր կ'ուտի»։

Երբեմն «քիսաչի» աղուէսը՝ ինչքան էլ մի կերպ իրան պահէր՝ անգամ իւր շքալից ապարանքում, այնուամենայնիւ չէր կարող նորան արմատապէս փոխել։ «Քիսաչի» էր, «քիսաչի» էլ պիտի մնայ։ Նա սովորած բաղնիքի աղջամղջերին, սովորած ամեն տեսակ շարաւոտ կեղտերին, հմուտ ամեն գոյնի լրբութիւնների, երբեք երկար հանգիստ մնալ չէր կարող, թողեց այն շքեղաշուք ապարանքը և լեշերով խաբուելով, գնաց հեռացաւ։

Գորտն էլ հօ հանգիստ չէր առնում։ Բազէի փառքը, Բազէի պանծալի շուքը նրան միանգամայն դադար չէին տալիս. կռկռում էր, հա կռկռում։ Լուտանք էր, որ անվերջ թափում էր հոտած պղպջանքով լի բերանից։

Երկար համբերութիւնն էլ խոհեմութիւն չէ, մտածեց Բազէն և վճռեց յանդուգն գորտին մի փոքր պատուհասով ցոյց տալ իւր մեծութիւնը և բացատրել, որ «որքան փղի դէմ հաչէ, այնուամենայնիւ նա քաջ չէ»։ Նա քոթոթ է, քոթոթ էլ կայ. իսկ փիղը փիղ է և փիղ էլ կըմնայ։

Ուստի կանչեց Կարապին և յայտնեց իւր մտադրութիւնը։

—Դու թող, ասաց Կարապը, նրա դատաստանը ինձ յանձնիր և ես կ'իմանամ։

—Լաւ, պատասխանեց Բազէն, լաւ է որ այդ հոտած լէշը ես չշօշափեմ, արէք ինչպէս ուզում էք. և այդ դէպքում իւր իրաւունքը յանձնեց Կարապին ու ինքը շարունակեց իւր վեհապանծ իշխանութիւնը։

Կարապը գնաց դէպի Գորտի լիճը և կանչեց նրան դուրս։

Կոկռալով դուրս եկաւ Գորտը և շողոքորթելով Կարապին, հարցրեց նրա առողջութիւնը և ուզեց խօսքը շարունակել։ այդ միջոցում Կարապը խրոխտաց և ընդհատեց նրա ձայնը։

Այդ ձայնի վրայ դուրս եկան ձուկը, բադը, մողէսը՝ սևերես «լիւթ-լօթի» աղուէսը, որ նոր էր ապաստանել լճի ափերում։ Բոլորն էլ ապշած նայում էին թէ ինչպէս ձայնը փորը ձգած գորտը դողդողում էր Կարապի առաջ։

—Որովհետև դու քո չափը չճանաչեցիր, խօսեց Կարապը, որովհետև դու դադար չտուիր քո լկտի վարմունքներին, քո ծայրահեղ վայրահաջութիւններին, ուստի ես հրամայում եմ՝ քեզ գնալ բանտ, ապա թէ ոչ այս ամբողջ լիճը տակն ու վրայ կ'անեմ և քեզ տեղդ ու տեղդ կըսատակեցնեմ։

—Վա՜յ, գոռաց գորտը, այս ինչ պատուհաս է։

—Ձայնդ կտրիր, խրոխտաց Կարապը, իմացիր, որ իմ վճիռը վճիռ է, իմացիր, որ ըմբոստ արարածների ապագան մերկութիւնն է, մութ բանտը, կուռ շղթաները, թուքը և մուրը։ Աղուէսի փորը մէջքին կպաւ, այս ինչ եմ լսում, մտմըտաց նա, այսպէս պիտի լինի ուրեմն և իմ վերջը, եթէ ինձ էլ մի օր մերկա-

նորմանտ տիրապետներին կընուիրէ այդ պատիւը, երբեմն կըջանայ հաստատել թէ հռովմայեցիք Բրիտանիայէն նահանջելէ անմիջապէս առաջ այս տեղոյն վրայ փայտեայ ամրոցներ կառուցել են իբրև բնիկները զսպելու վերջի ջանք. բայց երբեմն էլ պատմութիւնը այնքան յառաջ կըգայ իւր դեղևոտ կասկածների մէջ, որ կ'ուզէ հաստատել թէ Յուլիոս կեսարի պատերազմական հանճարը ծնաւ այս ընտրելագոյն դիրքը: Եթէ բոլոր ենթադրութիւնները մի կողմը դնենք, այնքանը սակայն որոշ է թէ Վիլհելմ յաղթողի տիրապետութեան թուականէն (1078) մինչև Կարոլոս Բ. (1661), մօտ վեց դարեր այս հաստատութիւնը թագաւորանիստ է եղել, և այդ երկար ժամանակամիջոցին իրար յաջորդեալ գրեթէ ամեն մի տիրապետ մի բան աւելացրել է նրա վրայ: Տասնուչորս աշտարակներ, յիսուն առանձինն շէնքեր և երկու եկեղեցի մինչև այսօր կանգուն կըմնան այս շրջանի մէջ: Այս ու «Լոնդոն Աշտարակը» կարելի է համարել անգլիական հին և նոր ճարտարապետութեան մի ընտիր հաւաքածոյ: Նոր ասացի, որովհետև 19-րդ դարն էլ իւր ներկայացուցիչը ունի յանձին արդէն քաջածանօթ աշխարահռչակ կամուրջի, որ աշտարակի պարիսպներէն դուրս՝ արևելեան անկիւնէն կըբարձրանայ մի ահագին բարձրութիւն և երկինքէն կը դիտէ այս հնութեանց վրայ: Մենք քիչ անգամ կարող էինք լսել կամուրճի բարձր մեքենայից տակ գըրգռող պողպատեայ տախտակների խուլ ձայնը, և հազիւ կընշմարէինք առկախ լաստակերտների վրայ գործող փոքրիկացած գործաւորները: Այստեղ է նաև անծանօթ դարուց ներկայացուցիչը՝ Թայմզը գետը իւր պղտոր յորձանքներով:

«Լոնդոն Աշտարակը» կարևոր նշանակութիւն է առել նաև նրա համար որ իւր գոյութեան երկար ժամանակամիջոցի մէջ Թատր է հանդիսացել ամենատխուր դրամաների: Մի ցած կամարակապ անցք հիւսիսէն աշտարակը Թայմզ գետի հետ հաղորդակցութեան կըդնէ, և ծանօթ է «Դաւաճանների դուռն» անունով: Դաւադրական կասկածներով կալանաւորուած իշխանների, լորդերի, թագուհիների և կղերականների մի բոտուար բազմութեան վիճակուել է այս դռնէն ներս մտնելու անարգանքին առանց կրկին դուրս ելնելու պատիւը վայելելու: Հաստատութեան կենդրոնական հրապարակի վրայ մի պղնձեայ տախտակ կըրոշէ բուն կէտը, որի վրայ գլխատուել են հէգ դաւադրեալներ: Աննէ Թագուհին՝ Հենրիկոս Ը-րդի կինը մին է այդ զոհերէն: Այն կոճղը որի վրայ է տարածուել Աննէի պարանոցը, և այն կացինը, որով գլխատել են նորան, այսօր այդ երկու արիւնոտ գործիներն ամենայն խնամով կըպահուին «Սպիտակ» աշտարակի մէջը: Իսկ Լոնդոնի հրապարակների վրայ դրուած նկարների մէջ ամենէն ուշագրաւը և տխրահռչը այն նկարն է, որ կըներկայացնէ Աննէ Թագուհին կոճղի քովը նստացրած:

Տեսնելու ամենաարժանի երեք աշտարակներ կան այժմ: Առաջինը Ուէյքֆիլդ (Wakefield) աշտարակն է: Սա Դաւաճանների դռան ուղղակի դիմացը կեցած մի հսկայ, գլանաձև, բարձր և թարձր զանգուած է, նշանաւոր իւր սև և մաշած կողերով: Մի մութ, խոնաւ, ծամածուռ անցքով աշտարակէն ներս կը մտնինք. ոսկինների աշխարհն է որ կըպարզուի մեր առաջը: Այստեղ կըգտնէք վայելչապէս զետեղուած հին ասպետական զքանչաննների տեսակները, այստեղ են հռոմա պապերէն Անգղիացի տիրապետներին շնորհուած արդարութեան սուրերը բիւրեղյեա. այստեղ են մի կարգ պատմական դրօշակներ ըստ կարգին, այստեղ կը գտնէք արձաններ, ճրագակալներ, մկըրտութեան աւազաններ, մատրուակութեան անօթներ, բոցեղէն թագեր, ամենը շլացուցիչ: Բայց այս ամենի մէջ մի թագ ամենէն կըգեբազանցէ թէ իւր կենդրոնական դիրքովը և թէ ճոխութեամբ, այն էլ Վիգթօրիա Թագուհու թագն է: Կարծեմ բաւական կը համարուի միայն ասել թէ իբրև արհեստի արտադրութիւն, նուրբ է այս թագը, իբրև հնութիւն, նրա վրայ միացած են պատմական ընտիր քարեր. իբրև գնահատելի առարկայ, թող ներէ ինձ ընթերցողը ասել թէ անկարող եմ մի որևէ գին կտրել. որովհետև նա յեռուած է 2783 ադամանդներով, 277 մարգարիտներով, 5 սուտակներով, 17 սափիրաններով, 11 զմրուխտներով:

Արժանաւոր աշտարակներէն երկրորդը Բինքեամբ (Beanchamp) աշտարակն է: Կրկնութիւն արած կը լինիմ, եթէ այս աշտարակի երևոյթն ու օձապտոյտ անցքերը նկարագրեմ: Սա Ուէյքֆիլդ աշտարակի հետ մի հօր զուակ է ամեն առմամբ բացի իւր ծառայութիւնից: Տափակ սեղմուած յարկ, մեր օջախի ծխնելոյզէն աւելի սև պատեր, նեղ մարած պատուհաններ, մի քանի հին աթոռներ, մի ժանգոտ վառարան և մի պահապան. ահա ամենը այս աշտարակէն ներս. հա իրաւ մոռացայ ասել թէ կայ նաև պատէն կախուած մի ծանուցագիր.—«պարոններ, հաճեցէք պատերին չփուելէ զգուշանալ»: Ես նախ կարծեցի թէ այդ ազգարարութեամբ բարեխիղճ պահապանը կը զգուշացնէ այցելուաց որ չլինի թէ սպիտակ ներս մտնեն, սև դուրս գան. բայց վերջապէս գտայ թէ պատերի վրայ փորագրուած կան մի քանի թուականներ և անուններ, կը զգուշացնէ պահապանը, որպէս զի այցելուի շըփուելով չաւերեն այդ արձանագրութիւնները, եթէ այսպէս ներելի է ասել: Այս աշտարակն է եղել դաւաճանների բանտը. բանտի պատուհանէն պարզ կը տեսնուի կառափնարանը: Արդեօք ինչպիսի արիւնլուայ հառաչանք կը վրդովէր այս մեռած մթալորտը այն օր, երբ բանտարկեալներէն մին յերկուս կը բաժնուէր սուր կացինի տակը:

Սա չէ խնդիրը, պատէն կախուած ազգի առաջը կանգնած ցաւով յիշեցի մեր ցուրտ վերաբերութիւնը առ մեր հին յիշատակները: Եթէ լօնդօնցին այսքան խնամով կը պաշտպանէ մի քանի բանտարկեալների անհատական զգացմանց յիշատակը, ապա ուրեմն որքան աւելի հոգատար լինելու էինք մենք մեր վանքերին, մեր հնացած պարիսպներին, որոց վրայ ոչ թէ մի բանտարկեալի անհատական զգացումն է դրոշմուած, այլ մի ամբողջ ազգի զգացումը, մի ամբողջ անցեալի եկեղեցական, քաղաքական և բնական ամենակարևոր դիպաց ժամանակագրութիւնը, պատմական գոհարներ, որոց յարգը դժբաղդաբար մեզմէ քիչերն են ճանաչել:

Վերջին և, թողէք որ ասեմ, ամենանշանաւոր աշտարակը Սպիտակ աշտարակն է: Սա այն է աշտարակների մէջ, ինչ որ է Վիգթօրիա Թագուհու թագը միւս թագերի մէջ. սա է եղել բուն արքայական ապարանքը: Սրա արևմտեան պատի տակը կարգով շարուած են երկաթի և պղնձի անճոռնի թնդանօթներ, որոց ամեն մին մի երկար պատմութիւն ունի պոչէն կախ արած, իսկ աշտարակը կը պարունակէ զինուց մի ճոխ հաւաքածոյ: Աշտարակի առաջին յարկը մեզ անարժանեացս չէր արտօնուած տեսնել. երկրորդ յարկի մէջ պարսատէն սկսեալ մինչև բազմահարուածեալ կը գտնէք. ինչ կասէք, եթէ այստեղ գտնուէին Սարաթօնի պատերազմէն մնացած նիզակի բեկորներ: Երրորդ յարկը ասպետական դարը կը ներկայացնէ: Խաչակրաց ժամանակէն մինչև վառօդի գործածութիւնը ինչ տեսակ սաղաւարտներ և զրահներ որ գործածուել են անգլիացի զօրականներէն այստեղ կը գտնէք: Երկաթապատ ձիաւորների մի ահարկու զումարտակ այնքան բնական ձևի մէջ դրուած, որ մարդ մի տեսակ պատկառանքով կը դիտէ նոցա վառվռող աչերը: Այս հսկաների մէջ մասնաւոր տեղ է դրուած Եղիսաբէթ Թագուհին, որ կարմրորակ նժոյգի վրայ բազմած ոսկէթել շրջազգեստը մինչև գետին կը տարածէ:

Այս ամեն բանէն վերջը ինչ հակապատկեր Աստուած իմ: Լոնդոնի փողոցների մէջ մի քանի հարիւր քայլ անել և մի քանի անգամ ներողութիւն չխնդրել քեզ բախող անցորդներէն, այդ չեղած բան է: Այստեղ ամեն ինչ շարժման մէջ է. բեռնաբարձ կառքեր անվերջ ճռնչիւնով կ'անցնին ու կը դառնան, ժողովուրդը ի մի կը գայ հրապարակի վրայ. կառախումբեր փողոցների վրայ կախուած երկաթի կամուրջների վրայէն սուրալով կ'անցնին, մըրկած անտառի անվերջ որոտումի նման մի աներդհատ որոտում կը տարածուի օդի մէջ: Գալով Լոնդոն աշտարակի պարիսպէն ներս, ամեն ինչ այլափոխուած կը գտնես, այնտեղ կարծես թէ կեանքը կը դադարի, մի լուռ ամայութիւն է, որ կը պարզուի առաջդ, ոգևորիչ ներկայն կարծես տեղի կը տայ մահացած անցեալին. ամեն ինչ լուռ, ամեն ինչ հին, ամեն ինչ բորբոսած, պարիսպների վրայ տարածուած պատատող բույսը նոյն իսկ ծերացել, կմախքացել են. հայաց պահապանները, ամեն էլ ճերմակամօրուս ծերունիներ են շատ հին տարազների տակ:

Այստեղ մարդ յանդէտս կը լռէ, և կ'ուզէ ոտքի մատների վրայ քայլել, որ չլինի թէ դարուց լռութիւնը վրդովի: Կը տեսնէք այս շաղակրատ Անգլուհիները, որոնք գոհ չեն համարիր իրանց եթէ մի րոպէի մէջ առնուազն մի քանի հարիւր բառ և մի քանի քրքիջներ չարձակեն, սոքա միջավայրի ազդեցութեամբ զարմանալի կերպով համակերպել են: Միայն ես չեմ, զբօսաշրջիկների մի երկսեռ հոսանք է, որ պարիսպէ պարիսպ, աշտարակէ աշտարակ, հընութենէ հնութիւն կ'անցնի յուղարկաւորական մելամաղձիկ յառաջացումով: Տեղ տեղ մենք կը պատահենք նկարչուհիների, որոնց իւրաքանչիւրը մի ընտիր տեսարանի առաջ ծնրադրած վրձին կը շարժէր թղթի վրայ: Մենք մեր վրձինը մեր սրտերի վրայ շարժելէ վերջ դուրս եկանք:

Ալ. Ար—ծեան:

$^{12}/_{24}$ մայիսի, 1893 Թ.
Լոնդոն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Զինուորական օրինագծի մասին շատ են գրում անգլիական լրագիրները, անհրաժեշտ համարելով գերմանական զօրքի աւելանալը: Գերմանիայի անպարտելի լինելը ընդհանուր խաղաղութեան ու անդորրութեան ամենակարևոր պայմանն է նոցա կարծիքով: Եթէ Գերմանիայի ոյժերը թուլանան, եռապետական դաշնակցութեանն աչքառու վտանգ պիտի սպառնայ, իսկ այդ հանգամանքը Անգլիան իւր համար ոչ մի կերպով ձեռնտու համարել չէ կարող: Ահա թէ ինչ է ասում այդ մասին Pall Mall Gazette լրագիրը.

«Գերմանիայի անպարտելի լինելը եռապետական դաշնակցութեան անհրաժեշտ պայմանն է, իսկ դորանից կախումն ունի Եւրոպայի խաղաղութիւնը: Եթէ Գերմանիան իւր զօրքերի քանակութեան և սպառազինութեան կողմից Ֆրանսիայից և Ռուսաստանից թոյլ գտնուի, եռապետական դաշնակցութիւնը կը դադարի գոյութիւն ունենալուց: Մենք անգլիացիքս—և այս հանգամանքը ոչ մի վայրկեան պէտք չէ աչքաթող անել—մենք անգլիացիքս շահ ունինք այդ դաշնակցութեան պահպանելուց: Մեր արտաքին գործոց նախարարութեան մէջ աւանդաբար այն համոզմունքն է տիրում թէ մենք պիտի Գերմանիայի կողմը լինինք Ֆրանսիայի և Ռուսաստանի հակառակ: Ֆրանսիան գլուխ է բարձրացնում Եգիպտոսում և Նիւֆաունդլենդում, իսկ Ռուսաստանը Պամիրում, մինչդեռ Գերմանիայի հետ կռուելու ոչ մի պատճառ մենք չունինք:»

Ի վերջոյ անգլիական լրագիրը հրաւիրում է բոլոր հայրենասէր գերմանացիներին աշխատել, որ առաջիկայ ռայխստագը կազմակերպուի զինուորական օրինագծին համակրող տարրերից:

Times-ը և Daily News-ը նոյնպէս ցանկանում են որ գերմանական զօրքը ուժեղանայ, ձեռնտու համարելով այդ նաև անգլիական շահերի համար:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Մայիսի 21-ից.

ՀԱՄԲՈՒՐԳ.—Ընդհանուր առողջապահական պայմաններն այստեղ միանգամայն բաւարար են. դուցէ պատահած խոլերայի դէպքը միակը լինի:

ՓԱՐԻԶ.—Նախարարների խորհրդում ծովային նախարարը կարդաց գեներալ Դօդսի տեխնիքական զեկուցումը, որից երևում է, որ արշաւազուհը գործ է անել միաժամանակ թէ ածուխ և թէ սովորական վառօդ և փորձը ցոյց է տուել, որ աւելի վնասուել են զօրքի այն մասերը, որ սովորական վառօդ են գործ անել:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վի-

ցնեն, ախ, ինչի՜ նման կըլինիմ ես. և կ'անեն դրանք, անպատճառ կըմերկացնեն, չգիտեմ... Աղուէսը սաստիկ շուարած էր:

Այդ միջոցին բաղը մօտեցաւ և գորտի կոկորդից բռնեց. տուր իմ պարտքը, ես չեմ կարող այլևս ծառայել: Ձուկն էլ մի կողմից բռնեց նրա օձիքից. տուր, տուր մեր պարտքը:

Մողէսը կրկնեց նոյնը:

—Վա՜յ, վա՜յ, այս ինչ պատիժ է, կըռւաց, կռկռաց գորտը և ընկաւ Կարապի ոտները, աղաչեց, պաղատեց նրան, որ ներէ իրան:

—Ո՛չ, ներել չեմ կարող, միայն երեք օր քեզ միջոց կըտամ, որ այդ պարտատէրերիդ բաւականացնես, իսկ երեք օրից յետոյ դու կը գնաս ու կըմտնես բանտ:

Քոսոտ աղուէսը սաստիկ երկիւղով փախաւ և իրան ծածկեց աղբի կոյտերով:

Ագռաւը հեռուից կռկռաց, բայց Կարապի ձայնը որ լսեց, իսկոյն փախաւ:

Կաչաղակները շտապեցին այդ բոլորը ամբողջ աշխարհին իմաց տալ:

Իսկ բաղը, ձուկը, մողէսը և այն բոլորը, որոնց խաբել, կեղեքել էր գորտը՝ ընկան Կարապի ոտները, որ իսկապէս երեք օր թողնէ գորտին, որպէսզի իրանց հաշիւները վերջացնեն:

Մնացած գորտերն էլ այս լուրը լսելով, այստեղից այնտեղից սկսեցին իրանց նախկնական բայաթին՝ ‹քեռին մեռա՜, քեռին մեռա՜›...

Եւ ամեն կողմից սարսափած հարցնում էին. ‹ղո՞րդ, ղո՞րդ›:

—Հա՜, հա՜, վա՜յ, գոռում, գոչում էին գորտի ազգականները:

Զզուելի թէ աղետալի տեսարանը թողեց Կարապը և հեռացաւ:

Իսկ այդ ձայները հեռուից լսեց սև բրդոտ արջը, որ անտառի մթին անկիւններում ‹սարրափութեամբ› էր պարապում, գոռալով՝ ես ‹սարրափ› եմ, ես ‹սարրափ› եմ ես ‹ալմաստ› եմ ծախում և այնպէս գլորուեց, որ ճանապարհին անգիտակցաբար կոխեց այն աղբի կոյտը, որի տակից սարսափելի ճիչ արձակելով երևան եկաւ աղուէսը:

—Այս ինչ է, դու ա՞յստեղ, գոչեց արջը:

—Այո՛, բայց ինչ անիրաւն ես դու, ինչո՞ւ ինձ կոխեցիր, ախ, ինչ ‹խեւն› ես:

—Այո՛, համ խև եմ, համ սև, բայց գընանք այնտեղ, դէպի գորտի լիճը, այնտեղ ‹ալան-թալան› է:

—Ոչ, ոչ, մի՛ գնար, գոչեց աղուէսը և պատմեց ամեն ինչ:

—Վա՜յ, ի՛նչ ես ասում գոռաց բրդոտ արջը և ինքն էլ թաղուեց աղբակոյտերի տակ:

IV

Գորտը յայտարարեց, որ ինքը միանգամայն սնանկացել է և ոչ մէկի կոպէկն էլ չէ կարող տալ:

Լիճը դղրդում էր բիւրաւոր խառնիճաղանճ աղմուկներով: Քիչ էր մնում, որ գորտին խեղդէին:—Նա ինքը ևս շատ էր ցանկանում, որքան կարելի է շուտով բանտ մտնել և ազատուել այդքան ճիրաններից:

Նրա բաղձանքը լրացաւ:

Երեք օրից յետոյ աքսորականի տարազով, թքելով, մրելով իւր աղբիւրի վրայով տարան նրան ու պահ տուին չորս բորբոսնած պատերին:

Այնուհետև լիճը դարձաւ կատարեալ ‹լօթխանա›:

Մէկը մի անկիւն վերցրաւ, միւսը մի ուրիշը, երրորդը աղբիւրի ջրերի մէջ ապաստանեցաւ: Աղուէսն ու բրդոտ արջը նոյնպէս չկլացան այդտեղ մտնելու: Մէկն ոռնում է, միւսը գոռում, երրորդը կչկչում, չորրորդը կռկռում. մէկ խօսքով մի քաօս, որի նմանը դժոխային մի լաբիրինթոս միայն կարելի է երևակայել: Եւ այդպէս ամենքն էլ իրար միս էին կըրծում: Մէկը ուզում էր ինքը տէր լինել այդ բոլորին, միւսը առարկում էր, որ լիճն իրանն է, որ աղբիւրը կարող է տալ ուրիշին: Չորրորդը, որ հագել էր գորտի հարսանեաց շորերը, որ կարած էր նորագոյն տարազով, յայտարարեց, որ ինքն է ամենից իրաւացին և ինքը միայն կարող է վայելել թէ լճի, թէ աղբրի և թէ առհասարակ նրանց բոլորի իրաւունքները: Եւ այս ծիծաղաշարժ տեսարանին հանդիսատես էր հեռուից Բազէն՝ նրա հետ և Կարապը և բոլոր երգեցիկ թռչունները:

Ինքնահաւանի ապագան միշտ այդպէս է, ասաց Բազէն քմծիծաղ տալով:

Ես յիշում եմ քո ու բուին ու ագռաւին, որոնց նոյնպէս իրանց ծայրահեղ ըմբոստութեան ու լկտի ինքնահաւանութեան համար, դատափետեցին, մերկացրին և մութ բանտին գերեցին, աւելացրեց Կարապը:

—Այո, այդպէս է. այդ ստորամիտ արարածները թաւալելով կեղտոտութեան տղմերում, թափառելով թանձր մթութեան մէջ, երբէք չեն ընդունում, որ խաւարին յաջորդում է լոյս, գիշերին ցերեկ. չեն անգամ երևակայում, որ սարսափելի հեղեղատներից յետոյ ծագում է արև և եթերը կապում է ծիածան: Այդ կարճամիտ, փողոցային, գիշերային շրջմոլիկները, այնքան կարճատես են, այնքան ստորամիտ, որ իրանց փծնութիւնները քողարկում են ձմեռուայ ձիւնի տակ, կարծելով թէ՝ այդ ձմեռուան չէ յաջորդում գարունը և թէ՝ ձիւնը չի հալվում արևի ճառագայթների տակ: Փառք Աստուծոյ, որ մեր ապարանքը անառիկ մի բերդ է, որին նուաճել բիւրաւոր զօրքերն անգամ անզօր կը լինին: Մեր պատուանդանը մի ահարկու սար է, որի տապալուելը չնորք կամ երազ կարելի է հաշուել: Արդ և այսուհետև նուաստութիւն կը լինի այդ անբարտաւան, այդ աղբակոյտերի տակ մեծացած գորտերին, չիրուանիի աղուէսներին, անպիտան արջերին, խոզերին, ագռաւներին և այլոց: Այսուհետև անէծք նրանց, իսկ մենք, իմ սիրելի բարեկամներս, փախչենք այդ բոլորից, գգուենք լոյսը, ինչպէս միշտ գգուել ենք, սիրենք գործը և համեստութեամբ ու հեզութեամբ ջանանք մեր թափած քրտինքը ապարդիւն չկորցնել, ջանանք մեր վրայ ունեցած անհամար յոյսերը պսակել. ո՛ն ուրեմն յառաջ, ո՛ն դէպի գ՛ործ, դէպի լո՛յս:

Կեցցէ մեր Բազէն, գոչեցին բոլոր թռչունները:

Այդ միջոցին գորտի անտէրացած լճի մէջ թափուած հրոսակները ցնցուեցին և սարսափահար ճիչ արձակեցին:

Բոլորն էլ ուշադրութիւն դարձրին այնտեղ:

Լճի մէջ թափուող աղբիւրը յանկարծ պղտորուեց:

—Այս ինչ է, գոչեցին ինքնապաստան հրոսակները և այդ ցնցուած ժամին յանկարծ լսեցին մի ահագին խումփոց և սաստիկ սարսռացին:

Մէկ էլ տեսան խոյն ուղղակի աղբիւրի վրայով եկաւ և մտաւ լճի մէջ:

Լճի մէջ եղողները այս և այն անկիւնում կուչ եկան:

Խոզը խումփացրեց, դէս ու դէն պըտոյտներ արաւ և իւր գարշելի ձայնով գոռաց՝ ‹այս բոլորը իմն է եղել և այսօր էլ իմն է, իսկ ով ուզում է ինձ հետ մնալ և ինձ աջակցել, թող ձայն հանէ›:

—Ես ուզում եմ, ձայն տուաւ քաղցած աղուէսը:—Ես էլ, ձայնակցեց նրան արջը:

Իսկ ձուկը ոչինչ չասաց, բաղը միանգամայն հեռացաւ: Մողէսը նոյնպէս համաձայնուեց:

—Գիտէք, ասաց խոզը, գորտը սնանկացաւ, և մի կողմից այդ պատճառով միւս կողմից էլ իւր ինքնահաւանութեան համար բանտ մտաւ: Այսուհետև նա անիծուած է, նա մեզ մօտ էլ չպէտք է լինի:

Խոզը սնանկացած գորտի բոլոր կայքերի տէրը եղաւ, և այն բուռն հրոսակների պետը:

—

Այսուհետև հեռու կենալ այդ գիշերային շրջմոլիկներից, այսուհետև միանգամայն նրանց չյիշել մեր խօսակցութեան մէջ. քաջ պէտք է իմանալ, որ այդ տեսակ խմբակից կարելի է սպասել ամեն տեսակ կեղտոտութիւն, ամեն գոյնի լրբութիւն, որոնց միշտ պէտք է չերևակայել. այսուհետև հանդիստ և անդորր հոգով մենք գործենք, մեր գահը զերծ պահենք ամեն տեսակ աղտոտութիւններից, չկորցնենք մեր փայլը, ջանանք աւելի վառելու և աւելի շքացնելու: Փառք Աստուծոյ, որ մեզ հետ են բոլոր երգեցիկ թռչունները, թմբած բընութեան բոլոր հոգի շնչողները,—ասաց Բազէն և իշխանական սարասով շրջապատուած իւր թռչուններով գնաց և բազմեց իւր գահը:

ԶԱՐԵՀ

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Мая 1893 года.

բաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային ց.

Դ. Գ. ՌՈՒԴՆՈՎՍԿԻ—10—11 ժ. Ներքին, երեխայոց և կանանց ց.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11¼—12½ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12¼—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. Ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և Ներքին ց.

Ի. Վ. ՁԷՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., Քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի։

Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (և մորթու) և վիրաբուժութեան։

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7¼ ժ. ականջի, կոկորդի, քթի և նեարդային ց. (ելեքտրաբուժութիւն և մարզումն)։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր., և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ժ. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլեթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում. Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օր ժամը 7—8 ին երեկոյեան։

Երկաթուղու փոստային - մարդատար Վլադիկավկազից դուրս է գալիս դէպի Ռոստով առաւօտեան 10 ժ. և 30 ր.։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը, (լոյս կիրակի գիշերուան 2 ժ.) շրջանաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Սեւաստոպոլի վրայով։

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին Նովօրոսիյսկի Կերչի վրայով։

Բաթում է հասնում.

Երկուշաբթի օրերը երեկոյեան, շրջանաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Ուրբաթ օրերը առաւօտեան, ուղիղ ընթացքով Սեւաստոպոլի վրայով։

Ուրբաթ օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամենապատիւ տեղակալի կաթուղիկոսութեան ամենայն Հայոց Բարձր Սրբազան Սրբմիա եպիսկոպոսի առաջադրութեան համաձայն կարգադրուած է ամսոյս 23-ին, կիրակի օրը, ժամը 11½-ին սուրբ պատարագից յետոյ կատարել Տփխիսի բոլոր եկեղեցիներում ժողովրդական երեք պատգամաւորաց ընտրութիւնը, որոնք մասնակցելու են Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձական ընտրութեանը, որ որոշուած է կատարել հետևեալ կիրակի օրը մայիսի 30-ին նոյն դպրոցում։

Անդամ կոնսիստորիայի՝

Յովհաննէս քահ. Մալխասեանց։

(81) (2—2)

Թիֆլիզի գրավաճառանոցներում և հեղինակի այրիի մօտ վաճառվում են հանգուցեալ Աղէքսանդր Արարատեանի հետևեալ աշխատութիւնները.

1) Երկու Թումբ, գինն է . . . 25 կ.

2) Խղճմտութեան արգասիք, գ. 15 »

3) Քնարիկ մանկական, գ. . 10 »

4) Լուսանման, գ. . . . 30 »

5) Գիւղական խալիֆա, գ. . 50 »

6) Փնջիկ, գ. . . . . . 25 »

7) Հիմնարկութիւն գաւ. ուս. 70 »

8) Սուտ ճգնաւոր, գ. . . 30 »

Վերջին անգամ դիմում ենք այն անձանց, որոնց մօտ գտնվում են վերոյիշեալ գրքերից կամ բաժանորդագրութեան հասանելի գրամներ, շտապեն առանց այլևս յետաձգելու հասցնել մեզ, եթէ ոչ ստիպուած կը լինինք լրագրի միջոցով յայտնել դրանց ազգանունները։

(5—5)

ՍՊԻՏԱԿԵՂԷՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻՐԱՆԵԱՆՑԻ

Պատիւ ունիմ երկտողիւս յայտարարել ընդհանրութեան, որ գործարանումս պատրաստվում է ամենաընտիր տեսակից բաղնիսի վերաբերեալ ՇԱՊԻԿ, ՑԱՄՔԻՉՆԵՐ և ՍՐԲԻՉՆԵՐ, նմանապէս ԵՐԵՍՍՐԲԻՉՆԵՐ և գրասեղանի ԾԱԾԿՈՑՆԵՐ

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Յանկացողները կարող են դիմել գործարանս, որ գտնվում է հալաբար Պօկրովսքիա կաղարմի հանդէպ, տուն Մակարովի № 4.

Պատուէրներ եւս կ'ընդունուի և ամենայն ճշդութեամբ կըկատարուի։

(60) (5—5)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

[illegible]

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Թ. ԱՐՓ. Կ. ՄՈՒՐՍԵԱՆՑ

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Վաճառվում է Թարգմանչի մօտ, Յ. Մարտիրոսեանցի տպարանում: Օտարաքաղաքացիք դիմելու են հետևեալ հասցէով. Тифлисъ, Типографія И. Мартиросіанца.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

և վաճառվում է բացառապէս կենտրոնական գրավաճառանոցում

ԽՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

ՀԱՅՈՑ ԳԻՐԸ

բաղկացած 400 երեսից և 8 վիմատիպ նկարներով. պսակուած է Սահակ-Մեսրոպեան մրցանակով։ Գինն է 1 ռ. 50 կ., ճանապարհի ծախքով 1 ռ. 75 կոպէկ։ Գումարով գնողներին զեղջ է լինում։

(Խ) (25—6)

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԼԱՒ ՁԵՅՆՈՎ ՀՄՈՒՏ

ՏԻՐԱՑՈՒ

տարեկան 5—600 ռ. արդիւնքով.

Յանկացողները կարող են դիմել՝ Екатеринодаръ

Ктитору О. Башмакову.

(90) (6—5)

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՆ աւարտած մի երիտասարդ կամենում է ընտանիքներում հայոց լեզուի դասեր ունենալ։

Կարող է աշակերտներ պատրաստել Ճեմարանի և Ներսիսեան դպրանոցի բոլոր դասարանների համար։

Դիմել «Արձագանքի» խմբագրութեանը։

(72) (4—3)

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»

Տուրգենևի՝ «Յաղթական սիրոյ երգը», գինն է. . . . . 30 կ.

Ռուսոյի՝ «Յէզս» վէպ. Թարգմանչի յառաջաբանով, գինն է . . 80 կ.

Թարգ. Մարիամ Մարտիրեանի

(Խ) (20—2)

ԱՂՍՏԱՖԱ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑԸ

ընդունում է և ուղարկում ամեն տեսակ ապրանքներ զանազան տեղեր. նոյնպէս յանձնարարութեամբ գնում է և վաճառում Աղստաֆայում զանազան ապրանքներ։ Կոմիսիան սովորականից չափաւոր. մեծ քանակութեամբ ուղարկուելիք ապրանքների համար առանձին պայման։

Այն պարոնները, որոնք Թիֆլիզի կայարանում (Товарная станція) սեփական գործակալ չունին, կարող են դիմել Մովսէս Մսերեանցին, Ձաղինովի քարվանսարէն №-7, իսկ պայմանների համար ինձ Աղստաֆայում։

(88) (10—5)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ 10-ՐԴ ԴԱՐՈՒ

Հեղինակութիւն

ՊԵՏՐՈՍ ՍԵՎԱՁԵԱՆՑԻ

Վաղօրօք ցանկացողները պէտք դիմեն Թիֆլիզ «Կենդրոնական գրավաճառանոցին»։

Գինն է ճան. ծախքով 1 ռ. 25 կ.։

(Խ) (10—3)

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է հայերէն լեզուի դասեր ունենալ ընտանիքներում։

Պատրաստում է աշակերտներ՝ ռէալական, գիմնազիօնի և Ներսիսեան դպրանոցների ստորին դասարանների համար։

Դիմել «Արձագանքի» խմբագրութեան։

(Խ.) (10—10)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում

Իշխ. Կ. Բէհբութեանցի

ԾՈՒԽ

(Ծխական հոգաբարձութեան կազմակերպութեան մասին) գրքոյկը

Օրէնքի քաղուածներով հայերէն և ռուսերէն։

Գինն է 15 կ. գումարով զիջումն։

(Խ) (25—12)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում լոյն մատենագիր Ռանգաբէի՝

ԷՄԱԷ

վէպ. Թարգմ. Յովհ. Լալայեանց։

ԳԻՆՆ Է 25 Կ.

(5—4)

Ոսկէ մեդալ Թիֆլիզ 1889 Թ. — Ոսկէ մեդալ Կազան 1890 Թ.

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՒԻ

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

ՀԱՅԻ ԱՐԱՂ, ՍՊԻՐՏ, ԿՕՆԵԱԿ, ՌՈՄ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼԻԿԵՕՐՆԵՐ։

Պէտք է դիմել.—Въ главную контору Д. З. Сараджева въ Тифлисѣ.

(117) (50—48)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ» ՖՕՍԹԷՐԻ, ՆԿԱՐՆԵՐՈՎ,

Թարգմանութեամբ Գրիգորիս Երզնկեանցի. վաճառվում է Թարգմանչի մօտ և կենդրոնական գրավաճառանոցում։

Գինը 50 կոպէկ. ԶԵՂՋՈՒՄՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ։

(Խ) (2—2)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ

ՁՈՒ ՆԵՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

անվնաս, գոյնզգոյն մածուցիկ հատիկներով, նոյնպէս և փոշի և հեղուկ դրութեամբ, վայրկենաբար ներկելու հրահանգի համեմատ։

ԶԱՏԿԱԿԱՆ ԽԻՂԱՀԱՑԵՐԻ ԵՒ ԱՐՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վանիլ, զաֆրան, կարդամոն, ջավզ և տերև, քաղցր և դառը նուշ, լիմոնի և վարդի իւղ, պօմերանցովի և վարդի ջուր և այլն։

(118) (50—47)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

ԳԻՐՔ Ա.—Բ.

ՆԻՒԹԵՐ 1780—1834 Թ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսի լուսանկար մեծադիր պատկերով և շքեղ տպագրութեամբ։

Աշխ. Գիւտ քահ. Աղանեանց

Արժանացած Սահակ-Մեսրոպեան մրցանակին։

ԳԻՆՆ Է 2 Ռ.

Ճանապարհի ծախքը 30 կոպէկ։

Դիմել աշխատասիրողին կամ կենդրոնական գրավաճառանոց։

(25—12)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Լոնդոնի ու Բաթումի միջև և փոխադարձօրէն։

Ուրբաթ, 28 մայիսի (9 յունիսի), դուրս կըգնայ Բաթումից (Մանշ) (Manche) նաւը, նաւապետ Բլան (Blanc) դէպի Կ. Պոլիս, Մարսէյլ, Հավր, Լոնդոն, մտնելով նաև միջանկեալ նաւահանգիստներ։

Ագէնտները՝ Բաթումում Պեւճոկեան, Թիֆլիզում Հէջոռբեան, և Բագւում Պօլլիաս։

(32) (2—2)

ո. և կ.

Ա. Գ ՄԻՐԶՕԵՎԻ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ամառը յունիսի 10-ից տեղափոխվում է Վարվարինօ կայարանի մօտ վըստուած Փվիշխէթ գիւղը. ընդունում է աշակերտներին պատրաստելու Միջ. ուսումնարանների բոլոր դասարանների համար. դիմել՝ Грибоѣд. ул. д. № 11.

(79) (5—2)

Գ. ՋՈՒԴԵՐՄԱՆ

99 **ՊԱՏԻԺ** 66

Կօմ. 4 գործ.

Թարգմ. Ա. Թարխանեանի

ԳԻՆՆ Է 60 Կ.

Վաճառվում է «Կենդրոնական գրավաճառանոցում»

(61) (5—5)

Սեպտեմբերի 1-ից Երևանեան հրապարակի վրայ, քաղաքային տանը, գեղավաճառանոցին կից

ԲԱՑՈՒԱԾ Է

ԴԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ

Մ. Ի. ԱԴ ՄՈՒՐՕՎԻ

(78) (100—65)

Թիֆլիզի Կենդրոնական և Կովկասի

ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

«Ալմաստ» վէպը Բարձր-Հայոց կեանքից . . . . 2 ռուբ.

«Խև-Կարապետ» վէպը հայ-կաթոլիկների կեանքից . . . . 1 »

«Ղուշան» ողբերգութիւն Թուրքահայերի կեանքից . . . 1 »

«Սարրաֆ» ողբերգութիւն Թիւրքահայերի պատմ. կեանքից. . — 30 կ.

(62) (50—6)

ոււ.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՍՏԱՑՈՒԵԼ ԵՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԸ.—

	Ռ.	Կ.
Ս. Մելիք-Թանգեան, Մաղաքիա արքեպ. «Հովուական Աստուածաբանութիւն». գինն է . . . . ճան. ծախ. 25 կ.	1	25
Դուրեանց Մ. «Տոկոսաբեր աղբւսակ». գ. . . . ճան. ծախ. 15 կ.	»	25
Դրումմոնդ Հենրի. «Ամենալաւ բանը աշխարհում». Թարգմ. Կարապետ սարկ. Տէր-Մկրտչեան. գ. . . . ճան. ծախ. 10 կ.	»	20
Լոկիեռ. «Երրորդ ոսկի». առակ. Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց. Բ տպ. գ. . . . ճան. ծախ. 10 կ.	»	10
Լէօ. «Իմ յիշատակարանը». գ. . . . ճան. ծախ. 20 կ.	1	»
— «Վերջին վէրքեր». գ. . . . ճան. ծախ. 15 կ.	»	30
Մելիք-Թանգեան Ն. «Աշխարհաբար լեզուի քերականութիւնը». գ. ճան. ծախ. 15 կ.	»	35
Շահազիզեան Ս. «Յօբելեանի տարեդարձ». գ. . . . ճան. ծախ. 20 կ.	1	50
Շանթ. «Լերան աղջիկը». գ. . . . ճան. ծախ. 10 կ.	»	10
Ռանգաբէ. «Էմաէ». վէպ. Թարգմ. Յ. Լալայեանց գ. . . ճան. ծախ. 10 կ.	»	25
Տէր-Աւետիքեան Ն. «Վերածնութեան դար» գ. . . . ճան. ծախ. 20 կ.	1	»

(69) (5—4)